

ցուցանէ զկօշիկս ոտիցն՝ մտրակաւորս, գէթ ՚ի հեծանելն. սովորական սոնապանք եւ կօշիկք կամ օղք՝ ծիրանեգոյն էին: Իսկ օրէնք հեծելութեանն եւ սարք երիվարին՝ ըստ ասպետաց ժամանակին, թեթեւ կազմած, եւ ոչ ծանր ըստ արեւելեայց:– *Ձեռքաց ամփոփումն* եւ *զմօրուաց կարճումն*՝ ցուցանէ եւ պատկերդ կնքոյ Լեւոնի, որպէս եւ այլոց թագաւորաց՝ որք ՚ի ձեռագիրս նկարեալք երեւին, որք մօրուաւորք են, այլ ոչ մեծամօրուսք:– Նշանակք թագաւորութեան՝ որպէս ՚ի ձեռնադրութեանն տեսաք, էին *Դրօշն* կամ *Նշան*՝ առիւծ-պատկեր, *Գունդն* ոսկի եւ *Գաւազանն* շուշանածայր (Fleur de Lis)<sup>105</sup>:–

Ըստ այսոցիկ է իմանալ, զանազանեալ գունով եւ զարդուք, եւ զզգեստս պարոնայց եւ ազնուաց, քաւ ՚ի թագէն եւ ՚ի վակասէ. զայսպիսիս կրէր եւ թագուհին՝ սակաւ ինչ զանազանութեամբ յարքայականացն, գրեաթէ եւ պատմուճանն արտաքին՝ նման նորայումն էր:– Ձտարազ զգեստուց թագաւորին, այլ եւ զժողովրդականաց՝ ցուցցէ մեզ պատկեր նկարէն (կրկին մեծութեամբ բնագրին, ՚ի ծանօթ նկարչէ՝ Պիժակ Սարգսէ, որոյ էր եւ պատկեր աւետարանին Դրագարկի). յորում՝ թերեւս պատուականագոյն քան զզգեստուցն՝ գրելի է մեզ ցուցակութիւն կերպարանաց Լեւոնի Դ, որդւոյն Օշնի, որ աներկբայօրէն իսկական կենդանագիր է թագաւորին<sup>106</sup>, նկարեալ յամի 1131, յորժամ էր նա ամաց քսան եւ երկուց կամ երից:

Աւելորդ է ասել զի յարքունիսն եւ արտաքոյ՝ զամենայն օրէնս եւ հրահանգս թագաւորականս՝ ըստ կայսերական պալատան Բիւզանդիոնի եւ ըստ արեւմտեան արքունեաց ժամանակին յարմարեաց Լեւոն. կոչելով զինքն յոսկեղէն կնիքսն եւ ՚ի դրամս, որպէս տեսաք (յէջս 380,435):

ԼԵՒՈՆ կամ ԼԵՈՆ ԹԱԳԱԻՈՐ ՀԱՅՈՑ -  
ԿԱՐՈՂՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ

<sup>105</sup> Վահրամ ՚ի Վիպասանութեանն այսպէս տողէ զնշանակսն.

«Ձէթում արքայ Հայոց օճեալ,

Ոսկի թագիւ գնա պսակեալ,

Եւ *գաւազան ոսկւով* օճեալ

Ի *գունդ ոսկի* ընդելուզեալ»:

<sup>106</sup> Մաշուած մագաղաթին ոչ ներեաց ամենեւիմբ ճշգրտել զդման: